ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Հայ նոր քնարերգության ամենահմայիչ դեմքերից մեկի՝ Միսաք Մեծարենցի (1886—1908) կյանքի ու գործունեության, ինչպես նաև ստեղծագործությունների հավաքման, հրատարակման և ուսումնասիրության բնագավառում անուրանալի ծառայություններ ունի սփյուռքահայ բանասեր ու բանաստեղծ Թորոս Ազատյանը (1898—1955)։ Մասնավորաբար, 1922-ին տպագրված նրա «Միսաք Մեծարենց (իր կյանքը)» երկասիրությունը ցարդ մնում է մեծ գրողի կենսագրության միակ և շատ կողմերով ամենահուսալի աղբյուրը։ Այսօր էլ, ավելի քան կես դար անց, Մեծարենցի կյանքի ու ստեղծագործության ամեն մի բարեխիղճ ուսումնասիրող կարող է կրկնել այդ աշխատության գրախոսներից մեկի՝ Սիմեոն Հակոբյանի խոսքերը. «Շնորհակալ լինենք պ. Թորոս Ազատյանին, որ իր գրքույկով մեր ժամանակի ընթերցողին գեթ որոշ միջոց կապում է Բինկյանի վաղամեռիկ բանաստեղծի կյանքի հետ»[1]։

Սա բնավ չի նշանակում, թե Մեծարենցի կենսագրության այդ անդրանիկ փորձում առաջադրված ու լուծված են բոլոր հարցերը։ Այդ աշխատանքը գրողի գիտական կենսագրության ստեղծման ճանապարհին առաջին քայլն է։ Բնորոշ է, որ ինքը՝ Թ. Ազատյանը տարիներ հետո խոստովանել է, որ ոչ միայն անհրաժեշտ է հրատարակել «ամբողջական հավաքածուն անոր (Մեծարենցի—Ա. Շ.) գրչի արտադրություններուն», հավաքել «դեռ ցանուցիր, մոռցված նշխարները», այլև լույս ընծայել «նոր, անգիր գրվագներով, դասակիցներու և ժամանակակիցներու պատմածներով ու վկայություններով ճոխացած անոր ընդարձակ կենսագրությունը»[2]։ Ուզում ենք նշել, որ բանասերն սկսել էր այդ շնորհակալ գործը, բայց վերջհաս մահը խանգարեց, և նրա հայթայթած ուշագրավ շատ փաստեր մնացին ուսումնասիրողներին անծանոթ[3]։

Ներկա հոդվածում փորձ է արվում համակողմանիորեն ներկայացնել Մեծարենցի ուսումնառության պատկերը։ Ջանացել ենք ոչ միայն ճշգրտել փաստական առանձին սխալներ, այլև գրողին շմեկուսացնել դպրոցական միջավայրից (ընդհանուր առմամբ տարբեր հաստատություններում նա սովորել է 12 տարի), օգտվելով դասընկերների և մտերիմների հիշողություններից ու այլ

---

1 Ս. Հ., Գրախոսական, «Միսաք Մեծարենց», «Արեգ», Բեռլին, 1923, № 6, էջ 379։

2 Թ. Ա զ ա տ յ ա ն, Մ. Մեծարենցի մահվան 45-րդ տարին, «Աստղաբերդ», Իսթանպուլ, 1958, №№ 4—6 (28—30), էջ 50։

3 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Թ. Ազատյանի արխիվում պահվում են ապագա աշխատանքին վերաբերող զանազան նյութեր։ Դրանց մեջ խիստ հետաքրքիր են Մեծարենցի ազգական Զարմայր Մեծատուրյանի հուշերը, ինչպես նաև դասընկերների հիշողությունների սեպագիր գրառումները։ Այդ նյութերը մասամբ հրապարակել ենք մենք (տե՛ս «Սովետական գրականություն», 1978, № 3, էջ 132—140 և «Հայրենիքի ձայն», 1977, № 48)։

նյութերից, հոսել նրա առաջադիմության, հակումների, աշակերտական գործունեության մասին, նորովի լուսաբանել գրական սկզբնավորման խնդիրը։

Միսաք Մեծարենցը (Մեծատուրյան) սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում՝ Խարբերդի նահանգի (վիլայեթ) համանուն գավառի (սանջակ) Ակնա գավառակի (գաղա) Բինկյան (Բենկա, Բինկա, Բենկյան) գյուղում։ Շնորհիվ աշխարհագրական նպաստավոր դիրքի (շրջապատված էր անմատչելի լեռներով և Արածանի գետով), Բինկյանը երկար տարիներ ապահովված է եղել ասպատակություններից, ապրել է խաղաղ ու բարեկեցիկ կյանքով, իսկ բնակիչները հնարավորություն են ունեցել ավելի շատ ուշադրություն դարձնելու կրթական գործին։ Արդեն անցյալ դարի 40-ական թթ. գյուղում գործել են Մեսրոպյան արական, իսկ ավելի ուշ նաև Նունյան իգական վարժարանները[4], որտեղ դասավանդվել են հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն, կրոն, պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն, երաժշտություն և մարմնամարզություն։ Մեծարենցի ծննդյան տարում (1886) ուսուցչական կազմը բաղկացած է եղել հինգ մարդուց։ Մեսրոպյան վարժարանը եռահարկ էր, ուներ ընթերցասրահ, ուր «կը գտնվեին հայերեն լրագիրներ և հանդեսներ»[5]։

Բանաստեղծի հոր՝ Մեծատուրյանների և մոր՝ Ավագյանների գերդաստանները Բինկյանում հեղինակություն են վայելել։ Նրանցից շատերը ստացել են լուրջ կրթություն և մասնակցել հանրային գործերին։ Գրողի հոբելեբայրը՝ Պաղտիկը, օրինակ, 1884-ին Բինկյանի գյուղապետն (մյուդիր) էր, ազգականներից Գարեգին Մեծատուրյանը բարձրագույն երկրագործական կրթություն էր ստացել Փարիզում, մեր դարասկզբին հիմնել էր «Գութան» հանդեսը, ուրիշները տարբեր ժամանակներում վարել են տեղի վարժարանի տեսչի պաշտոնը։ Մասնավորապես, Մեսրոպյան վարժարանի տեսուչ Աստվածատուր Մեծատուրյանը 1869-ին գյուղում ստեղծել էր «Սանուց ընկերությունը»՝ նպատակ հետապնդելով հարստացնել դպրոցական գրադարանը։ Ընկերությունը գոյատևել է մինչև 1884 թ. և վարժարանի համար ձեռք է բերել թե՛ ուսումնական ու ընթերցանության գրքեր, թե՛ գրենական պիտույքներ[6]։ Մեծարենցի ավագ եղբայր Գևորգ Մեծատուրյանը Բինկյանի վարժարանն ավարտելուց հետո կրթությունը նախ շարունակել է Կ. Պոլսում, Հակոբ Գուրգենի «Հայկական կրթարանում», ապա վերջացրել օսմանյան իրավաբանական համալսարանը և 1891-ից հաստատվելով Սեբաստիայում, աշխատել է իբրև փաստաբան և ծավալել հանրային բեղմնավոր գործունեություն[7]։ Գրողի պապը (մոր կողմից)՝ Դաստար Ավագյան Բինկյանցին, նույնպես կիրթ ու ուսումնասեր մարդ էր։ 1863-ին Կ. Պոլսում հրատարակել էր «Սաստ մոլությանց» բարոյախրատական ոտանավորների ժողովածուն (նախատեսված

---

4 Գևորգ վ. Արսլանյան, Ժիրայր, Կ. Պոլիս, 1911, էջ 19։

5 «Ակն և ակնցիր», նախաձեռնեց և հավաքեց Առաքել Քեչյան, աշխատասիրեց, դասավորեց և խմբագրեց Մկրտիչ Պարսամյան, Փարիզ, 1952, էջ 108։ Բինկյանի վարժարաններին և ուսուցիչներին վերաբերող տեղեկությունները հիմնականում քաղել ենք այս աշխատությունից։

6 Հ. Ե. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1965, N։ 10—12, էջ 102—103։

7 Տե՛ս Գ. Մեծատուրյան, Հրաժեշտ, «Անդրանիկ», գավառական լրագիր, Սեբաստիա, 1909, N։ 38։

մանուկների համար), իսկ գյուղում ուներ անձնական ճոխ գրադարան, որ հայտնի էր «Ավգենց գրադարան» անվամբ[8]։

Մինչև դպրոց հաճախելը Միսաքը «կրթվել» է նման մարդկանց շրջապատում, նրա առաջին «ուսուցիչները» եղել են գյուղական մամիկները, որոնք, հատկապես ձմեռվա երեկոներին, հավաքվում էին Մեծատուրյանների ընդարձակ տանը, պատմում հեքիաթներ, երգում Ակնա անտունիներ։ Զարմայր Մեծատուրյանը հիշում է. «Միսաք ալ շատ կ՝ախորժեր հեքիաթներեն, մին էր անոնցմե, որ թախանձագին կը խնդրեին, կ՝ստիպեին հեքիաթ մ՝ըսել... Միսաք աչք-ականջ կտրած մտիկ կ՝ըներ... Այդ պատմությունները, ով գիտե քանի անգամ կրկնված, գոց կը սորվեր, ու երբ դարձյալ մամիկը զանոնք պատմելու ատեն սխալ մ՝ըներ կամ պատմվածքին կարգը շրջեր, կը միջամտեր, կ՝ուղղեր»[9]։

«Հազիվ վեց տարեկան», Միսաքին տալիս են Մեսրոպյան վարժարանը։ Ըստ կենսագրի, ապագա բանաստեղծը ունենալով «երազկոտ, հեզիկ ու լուռ» բնավորություն, դասերի ժամանակ իրեն պահել է կուշկանդված, դժվարացել հստակ արտահայտելու մտքերը, գերադասել է ավելի շատ լռել, քան պատասխանել։ «Դպրոցին տնօրեն Հարություն Տիրատուրյան և ուսուցիչ Զարեհ Գասյան (Տ. Պետրոս Ա. քհն.) վերջապես կը հարկադրվին ծնողքին հայտարարել Միսաքի ծույլ, անընդունակ ու հետզհետե ապուշ աշակերտ մը դառնալը։ Միսաք կարծես դասերը պատրաստելե ավելի հաճույք կը զգա ու կը նախընտրե կատարել տրված գրավոր ծանր պատիժները իր ծուլության համար։ Այդ անհատնում ընդօրինակությունները պահանջված ժամանակին հասցնելու գերագույն նիգը տառապանքե ավելի բան մը կ՝ըլլա իրեն համար»[10]։

Այս պնդումները բացատրության ու ճշգրտման կարիք ունեն։

Ճշմարիտ է, որ վարժարանում Միսաքն իր ընդունակություններով չի փայլել։ Զ. Մեծատուրյանը Մեծարենցի «մանկության շրջանին ընդունակության և աշխատասիրության մասին» ուսուցիչների բացասական կարծիքը համարել է «սխալ ու անարդարացի» և պարզաբանել է. «Հ. Տիրատուրյան, Սանասարյանե շրջանավարտ, երբ Բինկյանի վարժարանին տնօրինությունը կ՝ստանձնե, աշակերտական հին կարգերը կը լուծե, դասարանական դրություն մը կը հաստատե և առանց նկատի առնելու աշակերտներու տարիքի և ուսման աստիճաններու տարբերությունները, ավելի ու պակաս տարիքավորներով դասարան կը կազմե։ Փոքրերը, բնականաբար, մեծերու հետ դժվարավ կը հետևին դասերու, այդ պատճառավ ալ խստություններու և պատիժներու կը ենթարկվին։ Միսաքն ալ այդ անմիտ կարգադրության զոհերեն մին եղած է»[11]։

Մեսրոպյան վարժարանում Մեծարենցի ուսումնառության վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նրա ազգական և մանկության

8 Տե՛ս Գևորգ արքեպ. Արսլանյան, Միսաք Մեծարենցի հիշատակին. Հսկումը, «Նոր լուր», Կ. Պոլիս, 1934, № 4936։

9 «Սովետական գրականություն», 1978, № 3, էջ 136։

10 Թորոս Մ. Ադատյան, Միսաք Մեծարենց (իր կյանքը), հատ. 1, Կ. Պոլիս, 1922, էջ 8—9.

11 «Սովետական գրականություն», 1978, № 3, էջ 133։ Հ. Տիրատուրյանը (1872—1896) Կարինի Սանասարյան վարժարանն ավարտել է 1891-ին, իսկ Բինկյանի դպրոցում տեսուչ է աշխատել 1894—1895 թթ. (տե՛ս «Ակն և ակնցիք», էջ 109)։

ընկեր Վ. Արսլանյանը (Պրիսմաք)։ Վերջինս լինելով Մեծարենցի դասակիցը. հաստատում է, որ «ծաղկոցից մինչև ավարտական կարգ» իրենց կրթությանն ու զարգացմանը Զ. Դասյանի ու Հ. Տիրատուրյանի հետ հետևել է նաև բժիշկ Հաճի Մելքոնը։ «Դպրոցին մեջ,— պատմում է նա,— ծաղկոցը, երբ էշելմակը վզներուս անցուցած, ժամուն կողեն դպրոց կը բարձրանայինք, մեզի ամենեն սարսափ ազդող դեմքը Հաճի Մելքոնն էր։ Ծաղկոցին մեջ գրասեղաններուն վրա դողդղալեն նստած՝ սարսափով կը նայեինք իր ծաղկոտած դեմքին, թավ պեխերուն ու ձեռքերուն մեջ ճոճացող գավազանին. անոր ազդած արհավիրքը այնքան աչքառու էր, որ տունը գեղեցկորեն սահուն կերպով արտասանած Ա, Բ, Գ-ի ճանաչողությունը անգամ կը մոռնայինք սև գրատախտակին առջև դասի համար հասակ ձգած ատեննիս. և այդ երկչոտութենեն, այդ սարսափեն գիծ մը մնացեր էր դեռ պատանեկան մեր տարիքին մեջ ալ, շատ աղեկ կը հիշեմ»։ Պատիժների սիրահար է եղել նաև մայրենի լեզվի, թվաբանության ու գրավարժության ուսուցիչ Զ. Դասյանը (մհց. 1915-ին), որը «ահարկու տպավորություն թողած էր իր ապտակելու շուտիկ, արագ և ընդունակ կարողությունով»[12]։

Վ. Արսլանյանը հավաստում է, որ իրեն ու Միսաքին պատժել են ոչ միայն ծուլանալու, այլև... դասերից փախչելու համար։ Նա հիշում է, թե ինչպես են լքել դասերը, գնացել թուզ ուտելու կամ ձուկ բռնելու։ Իմանալով այդ մասին, ուսուցիչները ստիպել են դասերից հետո մնալ դպրոցում և երկու ժամ զբաղվել գրավարժությամբ։

Թ. Ազատյանի հաղորդմամբ, Միսաքը ծննդավայրում ուսանել է երկու տարի և 1894-ին մեկնել Սեբաստիա։ Բայց նրա «դպրոցական շրջանը» չէր կարող ավարտված լինել այդ տարում, քանի որ, ինչպես հաստատում են թե՛ Զ. Մեծատուրյանը, թե՛ Վ. Արսլանյանը, պատանին գյուղից հեռացել է Բինկյանի վրա հարձակման առաջին փորձից հետո, իսկ դա տեղի է ունեցել 1895 թ. հոկտեմբերի 27-ին։

Սեբաստիայում Մեծարենցի ուսումնառության վերաբերյալ տեղեկությունները շատ սուղ են։ Այստեղ նա չի սովորել Արամյան ազգային վարժարանում, ինչպես գրել է Թ. Ազատյանը, այլ «Սահակ էֆ. Սերայտարյանի վարժարանում» («Սահակյան»), որի վիճակն ավելի բարվոք էր, քան Արամյանինը, և Զ. Մեծատուրյանի վկայությամբ դասերին «կը հետևի ուշադրությամբ»՝ փարատելով «կարծեցյալ անընդունակության» մասին կասկածները[13]։ Ասենք նաև, որ այս դպրոցը 1888-ին ունեցել է 100 աշակերտ, դասավանդվել է չորս լեզու[14]։

Մեծարենցը ուսումը շարունակել է Մարզվանի «Անատոլիա» ամերիկյան կոլեջում[15]։ Այս հաստատությունը բացվել էր 1886 թ. սեպտեմբերին՝ ստեղծ-

---

12 Վահան Արսլանյան, Միսաք Մեծարենց. գիծեր իր կյանքեն. ԳԱԹ, Մ. Մեծարենցի ֆոնդ, № 313/5, էջ 29։

13 «Սովետական գրականություն», 1978, № 3, էջ 136։

14 Տե՛ս «Պատմագիրք հուշամատյան Սեբաստիո և գավառի հայության», կազմեց Առաքել Ն. Պարիկ, հատ. Ա, Պեյրութ, 1974, էջ 463։

15 Կոլեջի և նրա ուսուցիչների մասին տվյալները վերցրել ենք հետևյալ աղբյուրներից. Ավետիս Ս. Տարագճյան, Մարզվանի հայ ավետարանական ժողովուրդը. Պեյրութ, 1960։ Ա. Կ. Կյուլպենկյան, Կենսագրություն բրոֆ. Կարապետ Թումայանի, ուսուցչապետ Անաթոլիա գոլեջի ի Մարզվան, Նյու Յորք, 1930։ Ա. Կ. Կյուլպենկյան, Վեր-

վելով Կ. Պոլսից Մարզվան տեղափոխված աստվածաբանական ճեմարանի հիման վրա։ Հիմնադիր ու տնօրեն Կարոլոս Զ. Բրեյսին (1838—1917) ուներ «քաջ հայագետի» համարում։ Ուսման տևողությունը չորս տարի էր։ Կրտսերագույն, կրտսեր, երեց և երիցագույն կարգերին հետագայում ավելացվել են նախապատրաստական երկու դասարան։ Կոլեջում դասավանդել են հայերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն ու գերմաներեն, ինչպես նաև կրոն, պատմություն, փիլիսոփայություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, աստղագիտություն, քիմիա, անատոմիա, գեղարվեստ ու երաժշտություն։ Աշակերտներին տրվում էր հիմնավոր կրթություն, ուսուցիչների ճնշող մեծամասնությունը հայ էր, սաներին չէր արգելվում հայկական եկեղեցի հաճախելը[16]։ Ահա ինչու Գևորգ Մեծատուրյանը եղբոր համար կրթօջախ էր ընտրել Անատոլիա կոլեջը (չմոռանանք նաև, որ Մարզվանը մտնում էր Սեբաստիայի կուսակալության մեջ, և այստեղ, հատկապես 1895—1896 թթ. կոտորածներից հետո, բինկյանցի ընտանիքներ էին ապաստանել)։

Ե՞րբ է սկսվել Մեծարենցի ուսումնառությունը Մարզվանում։ Այս հարցում հետազոտողներն ու հուշագիրները տարամիտվում են։ Կենսագիրը հայտնում է, որ «Միսաք 10—11 տարեկան էր տակավին», երբ ընդունվել է կոլեջ, ընդ որում «ընդունելության պայմանները լրացնելու համար» «12 տարեկան ցույց կը տրվի», որ երեք տարի ուսանելուց հետո, «նախապատրաստական շրջանը հազիվ սվարտած, 1901-ի արձակուրդին կուգա Սվազ և ալ չվերադառնար»[17]։ Եթե գրողն իրոք կոլեջի սան է դարձել 1896 կամ 1897 թթ., ապա նա պետք է հեռացած լիներ 1899-ին կամ 1900-ին, մի բան, որ չի հաստատվում հենց Թ. Ազատյանի փաստարկմամբ։ Վ. Արսլանյանը ևս որոշակի պատասխան չի տալիս և նշում է միայն, որ Մեծարենցը Մարզվան է մեկնել Սեբաստիա տեղափոխվելուց մի քանի տարի հետո։ Զ. Մեծատուրյանը այդ տարեթիվն է համարում 1897-ը, իսկ Վ. Նարլյանը պնդել է թե «Մեծարենց 1899-ի շրջանին ամերիկյան գոլեճը աշակերտության կուգար»։ Թվում է, որ այս վերջին կարծիքը ընդունելի պետք է լիներ, քանի որ հեղինակը (հետագայում Օրապիզոնում հրատարակվող «Փեթակ» հանդեսի խմբագիրն էր) ոչ միայն Մեծարենցի դասակիցն էր կոլեջում, այլև իր հուշերը հրապարակել էր բանաստեղծի կենդանության օրոք[18]։ Այս խնդրում համերաշխ են բոլոր հուշագիրները. եթե Մեծարենցը Մարզվանում մնացել է երեք տարի և 1901 թ. արձակուրդներին (կոլեջում դրանք տրվում էին հուլիս-օգոստոս ամիսներին) դնացել Սեբաստիա, ապա պարզագույն հաշվումներով նա կոլեջում ուսանել է 1898-ից։

ջայուսի խոհեր, Նյու-Յորք, 1934 («Տր. Կ. Զ. Բրեյսի» հոդվածը), «Նոր այգ», հանդես, Մարզվան, 1910։

16 Ի դեպ, Կ. Պոլսի «Բյուզանդիոն» թերթում տպագրված թղթակցություններից (1899, № 836) մեկի հեղինակը (Լ. Պ.) գրում է, թե «Գոլեճին մեջ Տնօրենությունը ցույց տված է, թե հետին աստիճան կը հարգի Հայ-Լուս<ավորչական> ուսանողաց կրոնական զգացումները», իսկ «Արևելքի» եվդոկացի թղթակից Հ. Գ.-ն վստահեցնում է, որ հայ ուսուցիչների շնորհիվ «Գոլեճի հայ աշակերտներուն օտարոտի կամ ամերիկյան դաստիարակություն մը չի, որ կը տրվի» (1900, № 4228)։

17 Թ. Ա զ ա տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 11, 12։

18 Վ ա հ ա ն Ն ա ր լ յ ա ն, Միսաք Մեծարենց և իր «Ծիածանն»-ը (հիշատակներ), «Փունջ», Կ. Պոլիս, 1907, թիվ 5, էջ 77։

Մարզվանում Մեծարենցի ուսումնառության երեք տարիները համբնկան կոլեջի գործունեության խաղաղ ու արդասավոր շրջանին։ Ետևում էր մնացել 1893-ի ամեոը, երբ թուրքական իշխանությունները շինծու մեղադրանքով ձերբակալել և կախաղանի էին դատապարտել (այդ վճիռը փոխարինվեց վտարումով) «ուսուցչական կաճառի» նախագահ, պատմության և փիլիսոփայության դասախոս Կարապետ Թումայանին (1852—1939) և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ Հովհաննես Դայայանին (1864—1934), ասես մոռացվել էր 1895 թ. նոյեմբերի 15-ը, երբ ջարդարարները Մարզվանի հայոց թաղերն ավերելուց և 125 հայ սպանելուց հետո հարձակվել էին նաև կոլեջի վրա։ Աստիճանաբար կյանքը հունի մեջ էր մտնում։ Իր գործունեությունը վերսկսեց 1888-ին կազմակերպված հայ ուսանողների «Դրական միությունը», որի աշխատանքները գլխավորում էր թուրքերենի դասախոս, լեզվաբան Հովհաննես Հակոբյանը, երաժշտության և գեղարվեստի դասատու Արշակ Տաղլյանի ջանքերով ստեղծվեց նվագախումբ, նորից կազմակերպվում էին զեկուցումներ, բեմադրվում թատերական ներկայացումներ։ Մեծարենցը մասնակցել է այդ միջոցառումներին, հատկապես «Գրական միության» հանդեսներին և, ինչպես պարզել է Թ. Ալլատյանը, Վոլտերի «Ալզիր» թատերախաղում կատարել համանուն հերոսուհու դերը։ Ինչ վերաբերում է առաջադիմությանը, ապա Զ. Մեծատուրյանի վկայմամբ «հաջողակ է առհասարակ բոլոր դասերուն մեջ։ Աչքառու ընդունակության հարմարություն ցույց կուտա անգլ. լեզվի և անոր դժվարին հնչմունքներու առոգանության մեջ։ Հետամուտ է հայերենի զարգացման, որուն կը նպաստեին հայերենի ուսուցիչ Ավետիս Կյուպենկյանի դասերը և գրական զրույցները»[19]։ Հուշագրողի մի ակնարկից կարելի է եզրակացնել, թե գրողը ի՞նչ վերաբերմունք է ունեցել կոլեջի իր ուսուցիչների հանդեպ։ Վերհիշելով Սեբաստիայից (1901-ից հետո) իրեն ուղղված ընկերոջ նամակների բովանդակությունը, Վ. Արսլանյանը հաստատում է. «Ան իր նամակներու մեջ կը ներկայացներ գրանկարները գոլեճի պրոֆեսորներեն Սիվազլյանի (դասավանդել է մաթեմատիկա—Ա. Շ.) և Հակոբյանի, երկու աչքառու տիպարներ, մինչ խորշանք կ՚զգար Մանիսաձյանեն (դասավանդել է բնական գիտություններ—Ա. Ս.), որուն հանդեպ ամեն ուսանող բնազդական ատելանք մը կը սնուցաներ մեր օրերուն»[20]։

Մարզվանում Մեծարենցը մտերմություն է հաստատել կոլեջի սաներ Կեսարացի Մանուկ Խաչյանի (հետագայում առևտրական), շապինգարահիսարցի Գագիկ Օգանյանի (հետագայում բանասեր, մանկավարժ ու պատմաբան, նահատակվել է 1915-ին), մարզվանցիներ Գրիգոր Ագբլյանի, Հովհաննես Թումայանի (նահատակվել են 1915-ին) և այլոց հետ։ «Այս խմբակը,— հավաստում է Զ. Մեծատուրյանը,— արտասահմանեն գաղտնիորեն Ջոպանյանի «Անահիտ»-ը կ՚ստանար կանոնավորապես ու կը կարդար»[21]։

Բայց մարզվանյան տարիները Մեծարենցի համար նշանակալի էին

---

19 «Սովետական գրականություն», 1978, № 3, էջ 137։

20 Վահան Արսլանյան. Միսաք Մեծարենց..., էջ 77։

21 «Սովետական գրականություն», 1978, № 3, էջ 137։ Վ. Արսլանյանի պնդումով կոլեջում Մեծարենցի «ամենամտերիմ բարեկամն է եղել Վասվարյան ազգանվամբ մեկը, որ 1930-ական թթ. բժիշկ էր Աթենքում» (տե՛ս Վ. Արսլանյանի 1932 թ. ապրիլի 24-ի նամակը Վ. Ալազանին և Վ. Նորենցին, ԴԱԹ, Մեծարենցի ֆոնդ, № 313/7, էջ 2)։ Մեզ չհաջողվեց այս անձնավորության մասին տեղեկություններ գտնել։

թերևս ամենից առաջ նրանով, որ նա Անատոլիա կոլեջում սկսեց իր ստեղծագործական նախափորձերը։ Այս առթիվ չափազանց հետաքրքիր հուշեր է թողել Վ. Նարլյանը. «Առաջին ամիսները տակավին նորեկ ու անվարժ ըլլալուն, միայն քաղքեցիներու շրջանակին մեջ կը սահմանափակվեր, բայց հետզհետե իր սրամտության պատճառավ ճանչցվեցավ թե՛ աշակերտներեն, թե՛ ուսուցիչներեն. մանավանդ գրական բանաստեղծական քանի մը ինքնագիր փորձերե վերջ ամենեն սիրված էր։ Այս տարիքեն գրական արժանիք մը, կարողություն մը կը հուսադրեր, դասարանին մեջ գրիչը ձեռքը գիրքերուն կողքերը ոտանավորներով կը մրոտեր, նույնպես սերտարանին մեջ դասերը ձգելով, թուղթիկներու դեզը կը բանար ու կը գրեր շարունակ. խաղալ, խնդալ երբեք չուներ, միշտ առանձին, բակին մեջ, պատերուն տակը կը պտտեր ու երբ քիչ մը ձանձրանար՝ ննջարան կ՚երթար քիչ մը անկողնին վրա երկննալու, հետո կ՚ելլեր ու սև մատիտը ձեռքը՝ մահճակալին ետևի պատին վրա ժամերով կը շարժեր. ամեն կողմ սևցուցած էր։ Քանի մը անգամ իր այս սովորության համար պատժվեցավ հրապարակավ, սակայն ան չէր հուսահատեր. քիչ մը կուլար ու ժամ մը վերջ սրբված պատին վրա նորեն երկու տող կը գրեր։ Դասերու վրա որոշ ժամանակ մը հարևանցի, մեյմեկ անգամ կը նայեր ու անկե վերջ անոր համար այլևս գիրք ձեռք առնել չկար. այնպես դասարան կը մտներ ու կը հաջողեր»[22]։

Ավելորդ չենք համարում վկայակոչել մի փաստ ևս։ Թ. Ագատյանի արխիվում (հավելված, № 56) թղթի մի պատառիկի վրա գրված է. «Տքթ. Թրեյսի (տնօրեն). հեզ, բարի տղա մըն էր, ակնախոս. աշակերտական թերթ («Սոխակ»). 1900—01, ոտանավորներ կը գրեր խմորատիպ։ Արձակ կը գրեր այն ատեն»։ Ոչ մի կասկած, որ բանասերը գրառել է գրողի դասընկերներից մեկի հաղորդած տեղեկությունները։ Ուրեմն, Մեծարենցը կոլեջում աշխատակցել է «Սոխակ» աշակերտական խմորատիպ թերթին, չափածո գործերի հետ հեղինակել նաև արձակ ստեղծագործություններ։ Վ. Արսլանյանի խոստովանությամբ, 1902-ին երբ ինքը մեկնել է Մարզվան ուսանելու, «Գոլեճի շրջանակին մեջ Միսաք Մեծատուրյան գրական սիրուն անուն թողեր էր արդեն ու թերավարտ մեկնած անկե...»[23]։ Ու թեև Վ. Արսլանյանը հավատացնում է, թե «գոլեճ մեկնելես առաջ ան (Մեծարենցը—Ա. Ս.) չի մոռցավ իր ատելության մոտեցող խորշանքը հայտնելու ինծի, առավելապես անոր կրոնաբույր տափակ մթնոլորտեն ու կաշկանդումներեն»[24], այնուամենայնիվ Մեծարենցի կյանքում Անատոլիա կոլեջում ուսումնառությունը երևույթ էր։ Այս իմաստով լիովին արդարացի է Թ. Ագատյանը, երբ նկատում է. «...Մտքի կենսատու սնունդը կ՚ստանա Մարզվան, ուր ընտանեկան միջավայրեն հեռու կ՚ընտելանա արտաքին կյանքի պայմաններու և իր ուշադրությունը ամբողջովին կը նվիրե ընդհանուր զարգացման... կը ծանոթանա անդլիական գրականության, կը կարդա հետաքրքրական վեպեր, թատերական ու բանաստեղծական երկեր ու կը փորձե թարգմանություններ ընել։ Իր լուրջ ու կանոնավոր աշխատությունը գոլեճեն կուգա, որ ուշագրավ կը դառնա Կեդրոնականի մեջ»[25]։

---

22 «Փունջ», 1907, № 5, էջ 77—78։

23 Վահան Արսլանյան, Միսաք Մեծարենց..., էջ 57։

24 Նույն տեղում, էջ 60։

25 Թ. Ագատյան, նշվ. աշխ., էջ 14—15։

Մեծարենցը Սեբաստիա վերադարձավ՝ պատրաստվելով մեկնել Կ. Պոլիս, ուր նրա հայրը՝ Կարապետը և հորեղբայրը՝ Պողոսը, գրեթե 15 տարի առաջ էին պանդխտել և սեղանավոր էին։ Մինչ կհաղթահարվեին «անցագրային դժվարությունները», Մեծարենցը աշխատանքի է անցնում եղբոր՝ Սարգսի և հորեղբորորդու՝ Վարդան Մեծատուրյանների վաճառատան Սեբաստիայի մասնաճյուղում որպես հսկիչ[26] և միայն մեկուկես տարի անց, 1902 թ. սեպտեմբերին, ճանապարհ ընկնում մայրաքաղաք։

Կ. Պոլսում Մեծատուրյանները հաստատվում են Գալաթիա թաղում, ուր 1886-ից գործում էր նշանավոր Ազգային Կեդրոնական վարժարանը։ 1896-ի ողբերգական դեպքերի ժամանակ վարժարանը փակվել էր, բայց հաջորդ տարում վերաբացվել՝ կրելով կազմակերպչական փոփոխություններ։ Եթե մինչ այդ հաստատության տնօրեններ էին եղել պատրիարք Ներսես Վարժապետյանը, մշակութային ու կրթական գործիչներ Մինաս Չերազն ու Հարություն Մոստիչյանը, ապա քաղաքական ծանր պայմաններում սկսվեց «խնամակալության շրջան»։ Մինչև 1909 թ. տնօրենի պարտականությունները դրվեցին «ընդհանուր հսկող» Գառնիկ Բարունակյանի վրա, որը, ինչպես Ա. Ալպոյաճյանն է վկայում, «մանկավարժության համար հատուկ պատրաստություն մը չուներ և ոչ ալ փորձառություն դպրոցական գործին մեջ»[27]։ Հենց այս անձնավորության օրոք էլ, 1902 թ. աշնանից, Միսաք Մեծարենցին վիճակվեց դառնալ Կեդրոնականի սան (նրա աշակերտական համարն էր՝ 166)։

Կեդրոնական վարժարանում Մեծարենցի առաջադիմության ու վարքի մասին ունենք վավերական տվյալներ՝ 1902—1903 և 1903—1904 տարիների նրա առաջադիմության «Վիճակացուցները»[28], որոնք հետաքրքիր դիտարկումների հնարավորություն են ընձեռում։ Ուսումնական տարին տևել է 10 ամիս և բաժանվել երեք եռամսյա (սեպտեմբեր—հոկտեմբեր—նոյեմբեր, դեկտեմբեր—հունվար—փետրվար, մարտ—ապրիլ—մայիս) և մեկ միամսյա (հունիս) շրջանների։ Գնահատման բարձրագույն նիշը («Թիվ») «10»-ն էր։ Յուրաքանչյուր շրջանից հետո առարկաները նախ գնահատվել են ըստ «դպրությունների» (սրա տակ հավանաբար նկատի են առնվել հումանիտար առարկաները) և «գիտությունների» (ճշգրիտ ու բնական գիտություններ), ապա արտածվել է «միջին թիվը», ինչպես նաև որոշվել սմեն մի աշակերտի առաջադիմությունը տվյալ դասարանի սովորողների մեջ։ Այդ «Վիճակացուցներից» երևում է, որ Մեծարենցի առաջադիմությունը առանձնապես բարձր չի եղել։ Եթե նկատի ունենանք երկու տարվա գնահատականների «միջին թիվը», ապա այն կկազմի 5,84։ Բայց դիտելի է մի օրինաչափություն. որպես կանոն նրա առաջադիմությունը «դպրություններից» ավելի բարձր է, քան «գիտություններից»։ Առանձին դեպքերում այդ տարբերությունը նշանակալի է (Բ կարգի երկրորդ եռամսյակում՝ 8,15 և 1,57), իսկ երկու դասարանների տվյալներով համապատասխանաբար միջին թիվն է՝ 7,26 և 4,14։ Մեծարենցը «թույլ» կամ «անընդունակ» չէր բնական ու ճշգրիտ գիտություններից. նա դրահաշվից վաստակել է «0» նիշ, բայց ցանկության դեպքում հասցրել է «7»-ի։ Կարելի է

26 Թ. Աղատյանը կարծել է, թե Մեծարենցը զբաղվել է մանրավաճառությամբ (նշվ. աշխ., էջ 12)։

27 Արշակ Ալպոյաճյան, Կեդրոնականի հիշատակներես (1895—1899), «Հանդես ճշակույթի», Ստամբուլ, 1953—1954, № 16—20, էջ 71։

28 ԴԱԹ, Մ. Մեծարենցի ֆոնդ, №№ 313/19 և 313/20։

պնդել, որ այդ առարկաները նրա նախասիրությունը չէին։ Իսկ «դպրություններում» հաճախ դրսևորվել է փայլուն առաջադիմություն՝ ստանալով «8» և ավելի նիշեր, նույնիսկ մի անգամ հայոց աշխարհագրությունից նրա դիտելիքները գնահատել են «10+»։

Փաստերը ցույց են տալիս նաև, որ վարժարանի տնօրենությունը սկզբնապես հույսեր է կապել Մեծարենցի հետ։ Այդ է հաստատում Ա կարգի «վիճակացույցի» առաջին եռամսյակի առթիվ «Դիտողություն» բաժնում Գ. Բարունակյանի գրառումը. «Գովելի վարք։ Թեև ավելին կը սպասեինք ուսմանց մեջ, սակայն նկատելով որ ուշ սկսած է վարժարան գալ, կը հուսանք որ գալ եռամսեին մեջ հառաջադիմություն կրնա ընել»։ Նորեկ աշակերտը շարդարացրեց ընդհանուր հսկողի ակնկալիքը, և վերջինս հաջորդ եռամսյակում հարկադրված արձանագրել է. «Վարքը գովելի է։ Այս եռամսեին մեջ աշխատությունը պակսած կը տեսնինք»։

Կեդրոնական վարժարանում Մեծարենցն ունեցել է նաև այլ հետաքրքրություններ։ Ա. Ալպոյաճյանը խոստովանել է, որ «դժնդակ պայմաններում» Գ. Բարունակյանը ստիպված է եղել «տեսակ մը ոստիկանի դեր կատարել։ Շարունակ մեզի կը հետապնդեր, որպեսզի դուրսեն գիրքեր չբերենք դպրոց և ձեռագիր լրագիր հրատարակելու փորձեր չընենք»[29]։ Ու թեև Ալպոյաճյանի ասածը վերաբերում է իր ուսումնառության շրջանին (1895—1899), բայց 1903—1905 թթ. նույնպես, երբ Մեծարենցը Կեդրոնականի աշակերտ էր, Գ. Բարունակյանը շարունակել է խստությունները։ Այս առումով բնութագրական է Հ. Ճ. Սիրունու մի վկայությունը (նա ևս նույն տարիներին սովորել է Կեդրոնականում)։ Դպրոցը թողնելուց հետո, 1905-ին, երբ Մեծարենցը փորձել է հանդիպել իր դասընկերներին, «Գառնիկ Բարունակյանի—մեր ընդհանուր հսկողին—ակնարկեն կը վախնար ու կ՚սպասեր վարը, որպեսզի իր ընկերները տեսներ, երբ արձակվեին անոնք։ Համիտի այդ դաժան տարիներուն՝ դպրոցին դուռները չէին բացվեր օրվան ընթացքին...»[30]։ Չնայած արգելքներին, «արտասահմանեն Պոլիս սպրդած դիրքերը և թերթերը կ՚անցնեին ձեռք ձեռք... Բացի պաշտոնական մատենադարանեն... դաղտնի գրադարան մը ևս կը պտտցնեինք մեր դրպաններուն մեջ»[31]։ Ավելին, դպրոցի պատերի ներսում կեդրոնականցիները ոչ միայն ծանոթանում էին օտար հրատարակություններին, այլև լույս էին ընծայում ձեռագիր պարբերականներ։ Մեծարենցը, երբ արդեն Գ կարգում էր, ինքն էլ նախաձեռնում է աշակերտական մի ձեռագիր երգիծաթերթի հրատարակությունը՝ այդ գործում ներգրավելով դասակիցներ Գառնիկ Թուղլաճյանին, որ դարձավ խմբագիր ու մանկավարժ և գրախոսեց Մեծարենցի բանաստեղծությունները (նահատակվել է 1915-ին), հետագայում ճանաչված նկարիչ ու արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանին և ուրիշներին։ Այս մասին Թ. Ազատյանին պատմել է գրողի դասընկերներից մեկը, որի անունը բանասերը, ցավոք, չի հիշատակել. «Ի դասարանին աշակերտած ատեն,— գրում է նա,— երբ կ՚աշխատակցեր դրական հանդեսներու, Մեծարենց «Քահ-քահ» անուն երգիծաթերթի մը սկսավ հրապարակել դպրոցին մեջ։

29 «Հանդես մշակութի», 1953—1954, № 16—20, էջ 71—72։

30 Հ. Ճ. Սիրունի, «...Այս հիվանդ, հանճարեղ պատանին», «Նաիրի», Բեյրութ, 1969, № 20։

31 Նույն տեղում, № 19։

խմբագիրն ինքն էր, իր ծրագրով կը պատրաստեր և օրինակն լույս կը տեսներ։ Երգիծական նկարները կը գծեր Ռաֆայել Շիշմանյան, գլխավոր աշակիցն էր Գառնիկ Թուղլաճյան, որ Սանասարյանն եկած էր։ Երգիծաթերթը ամեն մարդի հատուկ նյութեր կը պարունակեր։ Գլխավոր աշխատակիցը ինքն էր Նավասարդ Միսաքեան ծածկանունով և իր ստորագրությամբ։ Հոն կ'երևնային ոտանավորներ և արձակ գրություններ։ Ամեն բանե կը հասկնար և ամեն բանե հաճույք կ'ղգար։ Մեկե ավելի թիվեր խմբագրած ըլլալը կը հիշեմ»[32]։ Մեկ ուրիշ դասակից՝ Վահրամ Պերպերյանը, որ դպրոցն ավարտելուց հետո զբաղվել է առևտրով, կենսագրին հայտնել է. «Քահ-քահ» երգիծաթերթը Մեծարենցի նախաձեռնությամբ իր ձեռագրով ու խմբագրությամբ— միայն մեկ օրինակ—ամիսը մեկ անգամ մը հրապարակ կ'ելլեր, Դ դասարանին թերթն էր։ Աշխատակիցները, որոնք իր դասակիցներն էին (իրմե զատ 12 աշակերտ), օր առաջ իրենց գրությունները կը հանձնեին Միսաքի, որ կ'ընդօրինակեր, կը դասավորեր ու լույս կ'ընծայեր։ Ան հոն կը կիրարկեր տաղաչափական նոր գրություն մը, զոր սրբագրեց հետո իր քերթվածներուն մեջ։ Գլխագրի թշնամի էր... Մեծարենց իր երգիծաթերթով վերի կարգի աշակերտության նախանձը կը գրգռեր։ Անոնք ալ կը գնահատեին իր բացառիկ կարողությունը։ «Քահ-քահը» 5 թիվ լույս տեսավ և ընդհատման պատճառը Միսաքի հիվանդությունը եղավ»[33]։

Բժիշկների խորհրդով Միսաք Մեծարենցը Կեդրոնական վարժարանում ուսումնառությունը կիսատ թողեց 1905-ի փետրվարի վերջերից։ Բայց այնտեղ անցկացրած տարիներն անհետևանք չեղան։ Հենց Կեդրոնականում էր, որ, 1903-ի գարնանը, Սեբաստիայում և Մարզվանում հեղինակած 13 քերթվածները ամփոփեց «Բաբախումներ» խորագրով աշակերտական տետրում և հանձնեց հայերենի ուսուցիչ Հրանտ Ասատուրի դատաստանին, նույն տարվա մարտից սկսեց Կ. Պոլսի պարբերականներում տպագրել իր չափածո անդրանիկ ստեղծագործությունները։ «Հիվանդ, հանձարեղ պատանին» հեռացավ դպրոցից, բայց ոչ գրականությունից։ Սկսվեց նրա ստեղծագործության կարճատև, բայց բեղմնավոր շրջանը։

* * *

Մենք հետևեցինք Միսաք Մեծարենցի ուսումնառությանը Բինկյանի Մեսրոպյան, Սեբաստիայի Սահակյան (Սերաստարյանի), Մարզվանի Անատոլիա և Ղալաթիայի Կեդրոնական վարժարաններում։ Ճշմարիտ է, այլուայլ պատճառներով նրան չհաջողվեց ավարտել այդ հաստատություններից և ոչ մեկը, սակայն սրանցից յուրաքանչյուրը, լինելով Մեծարենցի կենսագրության մի գրվագը, յուրովի, այս կամ այն չափով զարգացրել է նրա իմացական կարողությունները, ընդլայնել մտահորիզոնը և, վերջին հաշվով, նպաստել բանաստեղծական մեծ տաղանդի հասունացմանը։

---

32 ԳԱԲ, Թ. Աղաբյանի ֆոնդ, հավելված, N 56։ ՀՍՍՀ պետական պատկերասրահի Ռ. Շիշմանյանի արխիվում պահվում է բանաստեղծի «Նոր տաղեր» ժողովածուն «Ազն.<իվ> պր. Ռափայել Շիշմանյանի՝ Մեծարենցին» մակագրությամբ։

33 Նույն տեղում։

ГОДЫ УЧЕБЫ МИСАКА МЕЦАРЕНЦА

Доктор филол. наук А. С. ШАРУРЯН

(Резюме)

В биографии классика новой армянской литературы Мисака Мецаренца (1886—1908) менее всего исследован период его учебы. В статье на основе новых архивных материалов, воспоминаний школьных друзей и близких Мецаренца прослеживается этот период, уточняются отдельные факты, рассказывается об общественной деятельности Мецаренца, о его интересах; показано, что его первые поэтические опыты относятся к школьным годам.